

«Ուսանելու և հետազոտելու հեռանկարները Գերմանիայում և Հայաստանում. լավագույն փորձը երիտասարդ մասնագետներից. DAAD և KAS կրթաթոշակակիրները գեկուցում են»

**Որտեղ՝** «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում  
**Երբ՝** Դեկտեմբերի 12-ին՝ ժամը 16:45-ին

Միջոցառման օրակարգը՝

Գերմանական կրթական և հետազոտական ծրագրերը հրաշալի հնարվորություն են ընձեռում երիտասարդ և փորձառու գիտնականներին, ինչպես նաև ուսանողներին ընդլայնելու գիտական համագործակցությունը գերմանական բուհերի և հետազոտական կենտրոնների հետ:

Ծրագրերի արդյունքում ձևավորված երկկողմ կապերը նպաստում են բուհերի միջև համագործակցության ստեղծմանը և նոր խթան հանդիսանում գիտական մտքի զարգացման համար: Հայաստանում DAAD (Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն) և KAS (Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ) ներկայացուցիչներն ուրախ են, որ համագործակցության արդյունքում ստեղծված գիտակրթական ծրագրերը ծառայում են ի նպաստ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների միջազգայնացմանը, գիտական նորարար մտքի ձևավորմանն ու ընդլայնմանը:

Ձեռք բերված արդյունքները կներկայացնեն վերոնշյալ ծրագրերի կրթաթոշակակիրները:

**16:45** Մասնակիցների գրանցում

**17:00** Ողջույնի խոսք՝ DAAD և KAS ներկայացուցիչներ

**17:10 - 18:20**

Գիտակրթական համագործակցության արդյունավետ մոդելները. DAAD և KAS կրթաթոշակակիրները ներկայացնում են իրենց հաջողված փորձը կենսաբանության, երկրագիտության, իրավագիտության, աշխարհագրության, քաղաքագիտության և բժշկության բնագավառներից

**18:30** Ամփոփիչ խոսք և կրթաթոշակային ծրագրերի ներկայացում

**18:50** Հյուրասիրություն

**DAAD**

Deutscher Akademischer Austauschdienst  
German Academic Exchange Service

**KONRAD  
ADENAUER  
STIFTUNG**